ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-37/22 ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Ք. Գավառ **04 նոյեմբերի 2022թ.**
ժամը 15:00

Հանձնաժողովի նախագահ՝ Լուսինե Վարդանյան(ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Աննա Սաֆոյան (ԳԱ)
Սևակ Դվոյան (ԳԱ)
Գուրգեն Մելքոնյան (ԲԱ)
Արսեն Մելքոնյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-37/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնային աջաջարկների ներկայացման և գնահատման արդյունքների հաստատման մասին.

Քանի որ «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ի, <<Խաչպար>> ՍՊԸ-ի և Մեդէքսպերտ ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում էին նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ և ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-37/22 ծածկագրով գնման հրավերի 8.7 կետի դրութներով, «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ին, <<Խաչպար>> ՍՊԸ-ին և Մեդէքսպերտ ՍՊԸ-ին ծանուցել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման մասին:
«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը բանակցություններին չի ներակյացել, բայց էլեկտրոնային եղանակով ներկայացրել է նոր գնային առաջարկ:
<<Խաչպար>> ՍՊԸ-ի և Մեդէքսպերտ ՍՊԸ-ի ներկայացուցիչները չեն մասնակցել բանակցություններին և նոր գնային առաջարկ չեն ներկայացրել:

Բավարար գնահատված հայտերի գնային առաջարկները՝ ՀՀ դրամով.

1-ին չափաբաժին՝ **Էլեկտրամագնիսական համակարգ**

h/h	Մասնակցի անվանումը	Ապրանքի նախահաշվային գինը	Առագարկված գինը՝ առանց ԱԱՀ	Առաջարկված գնի՝ ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով
1	«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ	35 000 000	35 000 000	-	35 000 000
2	<<Խաչպար>> ՍՊԸ		40 000 000	-	40 000 000
3	Մեդէքսպերտ ՍՊԸ		50 000 000	-	50 000 000

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-37/22 ծածկագրով գնման ընթացակարգի Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում ներկայացված հայտերի գնահատման արդյունքների հիման վրա գնահատող հանձնաժողովն ընդունեց հետևյալ որոշումները"

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվեց բավարար և վերջինս ճանաչվեց ընտրված/հաղթող մասնակից:

- ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-37/22 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավել մասնակից, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն, պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
- Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը , ժամը 12:00-ին ք.Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենքի 2-րդ հարկի դահլիճ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ **Լ. Վարդանյան** .....

Հանձնաժողովի անդամներ՝ **Ա. Սաֆոյան** .....

Ս. Դվոյան .....

Գ. Մելքոնյան .....

Ա. Մելքոնյան .....

Քարտուղար՝ **Ա. Բաղեյան** .....